# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն **N 29(3)**

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի ընդարձակ նիստի

ք. Երևան 09 հոկտեմբերի 2009 թվականի

Նախագահում էր՝

Տ. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Վ. Դանիելյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ս. Պետրոսյան - ՀՀ Սփյուռքի նախարարի տեղակալ

Ռ. Հարությունյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ, գլխավոր տնօրեն

Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերով քարտուղարության պետ, խորհրդի քարտուղար

Յ. Շուքուրյան - ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս

Գ. Չուգասզյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ

Մ. Մարկոսյան - «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ

Կ. Վարդանյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն

Գ. Կարապետյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ

Ա. Բաղդրյան - «Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Հ. Խանջյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ

Հ. Մուսայելյան «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն

Հ. Չոբանյան - «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Հ. Վարդանյան - «Էյ Փի Ջի Լեբս ԱՄԱԲ» ՍՊԸ ՀՄ-ի տնօրեն

Ռ. Վարդանյան - «Քվանտ» վարժարանի տնօրեն

Ռ. Աղգաշյան - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր

Վ. Ալեքսանդրյան - Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարանի

ռեկտոր

Հրավիրվածներ՝

Դ. Սարգսյան -ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Ն. Երիցյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

Ս.Ղոնաղչյան - ՀՀ Կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ

Ս. Գագյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Ա. Քուչուկյան - «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ

Վ. Կիրակոսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ

Մ. Հակոբյան - “Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոն” հասարակական կազմակերպության իրավախորհրդատու

Ա. Գրիգորյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեղեկատվական հասարակության ձևավորման և էլեկտրոնային կառավարման վարչության պետ

Գ. Գևորգյան - Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Հեռահաղորդակցության վարչության պետ

Մ. Մելիքյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Հասարակայնության հետ կապերի մասնագետ

Ա. Ղազարյան - CAPS ծրագրի տնօրեն

Ա. Աբրահամյան - CAPS ծրագրի ՏՏ կլաստերի համակարգող

Ա. Սարգսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

Լ. Եղիազարյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

Ա. Հայրիյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նոր անդամների ներկայացում

ՏՏԶԱ Խորհրդի գործադիր քարտուղար Ա. Գրիգորյան

2. Հեռահաղորդակցության հիմնախնդիրների մասին

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»
հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Կ. Վարդանյան

3. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան

4. Գիտակրթական հիմնախնդիրների մասին

«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»
հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Կ. Վարդանյան

## 1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նոր անդամների ներկայացում

----------------------------------------------------------------------------------------------------------------------

(Տ. Սարգսյան, Ա. Գրիգորյան)

1. ա. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանը ներկայացրեց ՏՏԶԱ Խորհրդի նոր անդամներ «Սոֆտլայն Ինտերնեշնլ Արմենիա»-ի տնօրեն Արմեն Կարապետյանին և «Օրանժ Արմենիա»-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուային:

բ. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը շնորհավորեց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նոր անդամներին:

## 2.Հեռահաղորդակցության հիմնախնդիրների մասին

-----------------------------------------------------------------------------------------------------------------

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Կ. Վարդանյան)

2. ա. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանը տեղեկացրեց, որ հուլիսի 4-ից 5-ը Դիլիջանում տեղի է ունեցել Տեղեկատվական տեխնոլոգիաների լիդերների հանդիպում, որի ժամանակ քննարկվել են Հեռահաղորդակցության հիմնախնդիրները:

Ներկայացրեց քննարկումները և դրանց արդյունքում ձևավորված առաջարկների մասին տեղեկատվությունը:

բ. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը առաջարկեց, երկու շաբաթվա ընթացքում ստեղծել գործողությունների ծրագիր, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գլխավորությամբ, Հեռահաղորդակցության հիմնախնդիրների իրականացման համար միջոցառումների ժամանակացույց ստեղծելու նպատակով:

3. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին

----------------------------------------------------------------------------------------------------------------
----

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Գ. Ջուգասզյան)

3. ա. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին ներկայացրեց տեղեկատվություն:

բ. Տեղի ունեցավ մտքերի փոխանակում, արվեցին առաջարկներ, մասնավորապես «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ, գլխավոր տնօրեն Ռ. Հարությունյանը հիշեցրեց, որ ցուցակից դուրս է մնացել նոյեմբերի 5-ից 8-ը Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Հոսե քաղաքում նախատեսվող «ԱրմԹեք 09» համաժողովը:

գ. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը առաջարկեց հաստատել «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների ցանկը՝ ցանկում ներառելով նաև նոյեմբերի 5-ից 8-ը Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Հոսե քաղաքում նախատեսվող «ԱրմԹեք 09» համաժողովը:

4. Գիտակրթական հիմնախնդիրների մասին

----------------------------------------------------------------------------------------------------------------
----

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Կ. Վարդանյան, Յ. Շուքուրյան, Գ. Ջուգասզյան, Ա. Գրիգորյան)

4. ա. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանը տեղեկացրեց, որ սեպտեմբերի 12-ից 13-ը Աղվերանում

տեղի է ունեցել Տեղեկատվական տեխնոլոգիաների լիդերների հանդիպում, որի ժամանակ քննարկվել են Գիտակրթական հիմնախնդիրները:

Ներկայացրեց քննարկումների և դրանց արդյունքում ձևավորված առաջարկների մասին տեղեկատվություն:

բ. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը առաջարկեց ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գլխավորությամբ ստեղծել աշխատանքային խումբ, որը, համագործակցելով Խորհրդի Գիտակրթական աշխատանքային խմբի հետ, կքննարկի ձևավորված առաջարկները և անհրաժեշտության դեպքում կներկայացնի միջոցառումների ծրագիր՝ դրանք իրականացնելու համար:

**5.** Որոշվեց հաջորդ նիստը նշանակել ս.թ-ի հոկտեմբերի 28-ին ժամը 11.00-ին, օրակարգում ընդգրկել՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստերի հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ հարցը
2. Նոյեմբերի 5-ից 8-ը Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Հոսե քաղաքում նախատեսվող «ԱրմԹեք 09» համաժողովին պատշաճ ներկայանալու հարցը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ